ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Ուսումնական կենտրոն

Ուսումնական ծրագիր
Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան» որակավորման
«Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ » առարկայի
դասընթացի

Քննարկվել և հաստատվել է
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ուսումնական կենտրոնի
«Ընդհանուր պատրաստականություն»
կրթաճյուղի 01.06.2018 թ-ի թիվ 4 նիստում

Ք.Երևան

2018 թ

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Նախնական մասնագիտական կրթության «Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքները» առարկայի եռամսյա դասընթացի

Թեմա N	Թեմաների անվանումը	Ժամաքանակն ըստ թեմաների	Ժամաքանակն ըստ պարապմունքի ձևերի		
			դաս.	գոր.	սեմ.
1.	Քաղաքագիտության առարկան, խնդիրները և ձևավորման գործընթացը:	2	2	-	-
2.	Քաղաքական համակարգ հասկացությունը, կառուցվացքը և ֆունկցիաները:	2	2	-	-
3.	Քաղաքական իշխանության կայացումը և սոցիոլոգիայի դերը այս ասպարեզում:	2	2	-	-
4.	Սոցիոլոգիայի հիմնախնդիրները և նրա կապը քաղաքագիտության հետ:	2	2	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	***8***	***8***	-	-

Կազմեց՝

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի « Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի ավ. դասախոս, ոստ փոխգնդապետ

_____ Խ.Թովմասյան

Քննարկվել և հաստատվել է
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի«Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի նիստում առձանագրություն թիվ 4
01.06.2018 թ.
կրթաճյուղի պետ, ոստիկանության փոխգնդապետ

_____ Ա.Ալեքսանյան

1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան դասընթացի ուսումնասիրման համար հատկացված է 8 ժամ, որից՝

- դասախոսություն - 8 ժամ

2.«Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ» առարկայի ուսուցման նպատակը և խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է՝ նպաստել սովորողի մոտ քաղաքագիտության և սոցիոլոգիայի վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը:

Առարկայի դասավանդման ընթացքում լուծվում են հետևյալ խնդիրները՝

1. Հաղորդել Տեսական գիտելիքներ քաղաքագիտության վերաբերյալ:
2. Հաղորդել Տեսական գիտելիքներ սոցիոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ:
3. Ձևավորել գիտելիքներ քաղաքական իշխանության գործում սոցիոլոգիայի դերի վերաբերյալ:
4. Սովորողների մոտ ձևավորել տեսական գիտելիքների որոշակի պաշար ժամանակակից քաղաքական համակարգերի վրա սոցիոլոգիայի ազդեցության վերաբերյալ:

3. Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

1. Բնութագրել քաղաքագիտության հասկացությունը, ուսումնասիրման առարկան և ձևավորման գործընթացները

2. Ներկայացնել սոցիոլոգիայի հիմնախնդիրները
3. Պարզաբանել սոցիոլոգիայի պրակտիկ կապը քաղաքագիտության հետ
4. Մեկնաբանել սոցիոլոգիական հարցումների ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա
5. Վերլուծել քաղաքական իշխանության կայացման գուծում սոցիոլոգիայի դերը
6. Բնութագրել ժամանակակից քաղաքական համակարգերը

4. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Դասընթացը կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են «Պատմություն», «Մարդու իրավունքները և ոստիկանությունը», «Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը», «Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանության ծառայողի գործունեության մեջ»:

5. Դասընթացի ուսուցման մեթոդական ցուցումներ

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների տեսքով, լայնորեն կիրառելով ուսուցման ինտերակտիվ մեթոդները /«մտքերի տարափ», «զրույց», «բանավեճ» և այլն/: Դասավանդման ընթացքում օգտագործվում են նաև տեսանյութեր: Նյութի յուրացմանը մեծապես օժանդակում են դիդակտիկ պաստառները: Պարապմունքների ընթացքում պրակտիկ վարժությունների, իրավիճակային խնդիրների, առաջադրանքների և դերախաղերի միջոցով սովորողների մոտ ձևավորվում են անհրաժեշտ հմտություններ և ունակություններ, որոնք, տեսական գիտելիքներով ամրապնդվելով, դառնում են առաջիկա արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր պայման:

6. Ուսումնական նյութի բովանդակությունը

Թեմա 1 Քաղաքագիտության առարկան, խնդիրները և ձևավորման գործընթացը

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. քաղաքագիտության հասկացությունը
2. քաղաքագիտության առարկան

3. քաղաքագիտության ձևավորման գործընթացները
4. Պլատոնի և Արիստոտելի դերը, որպես քաղաքագիտության /հիմնադիր հայրեր/

Թեմա 2 Քաղաքական համակարգ հասկացությունը,կառուցվածքը և ֆունկցիաները

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը

1. քաղաքական համակարգի հասկացությունը
2. քաղաքական համակարգի կառուցվածքի մեկնաբանությունը
3. քաղաքական համակարգի ֆունկցիաները և ենթահամակարգերը
4. քաղաքական գիտակցությունը և քաղաքական կուլտուրան

Թեմա 3 Քաղաքական իշխանության կայացումը և սոցիոլոգիայի դերը այս ասպարեզում

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը

1. քաղաքական իշխանության գաղափարը և սոցիոլոգիան
2. սոցիոլոգիական հարցումների ազդեցությունը քաղաքական ինստիտուտների գործընթացների վրա
3. իշխանության մասին գաղափարները հույն փիլիսոփաների մոտ

Թեմա 4 Սոցիոլոգիայի հիմնախնդիրները և նրա կապը քաղաքագիտության հետ

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը

1. Սոցիոլոգիա առարկան և նրա խնդիրները
2. սոցիոլոգիայի կապը քաղաքական իշխանության ինստիտուտի ձևավորման գործում

Գրականության ցանկ

1. Белов Г. А.«Политология», Москва ,1996г.
2. Ռ.Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ , Ուսումնական ձեռնարկ բուհերի համար.Երևան 2002թ.
3. Панарин А.С. «Политология» ,Учебник Москва ,1998г.
4. Мирский Г. И. ,<«Авторитаризм и демократия: две модели». Полис. ,1996г.
5. «Введение в социологию» Учебник для вузов М., Наика ,2008г.
6. Давидов Г.П. «Прикладная социология» Минск, Выpш. школа 2004г.
7. Харчева В.Г. «Основы социологии» ,Учебник для вузов ,М. Логос 2001г.